

հաց կերած է. այս պատճառաւ ուխտաւորները շատ կը յարգեն այս քարը և պահպանելու համար զայն երկաթէ կասկարայով ծածկած են, ինչպէս որ կասկարային ծակերէն ալ կը ճանչցուի: Տեղւոյն բնակիչները ցոյց կուտան այն աղբիւրը որ հրաշքով բըղխած է նոյն տեղը, և ջերմեռանդութեամբ անկէ կը խմեն ուխտաւորները որ կը կոչեն զայն Առաքելոց աղբիւր (Մար. Ա. հատ. էջ 504):

Քրիստոսի Սեղանին այս աւանդութիւնը աւետարանական պատմութեան հետ չհամաձայնելով՝ այն յիշատակը զոր այս քարը կը մշանջենաւորէ՝ թերեւս կափառնաումէն երեք քմ. հեռու գտնուած էլ օրիւնի բլուրին հետ յարաբերութիւն ունեցած էր և որ Seawulfի ժամանակ Քրիստոսի Սեղան (Mensa Christi) անունը կը կրէր, վասնզի մեր Տէրը հոն էր որ կերակրած էր 5000 անձեր: Ուրիշ ուխտաւորներ նոյն անունը կապուած կը գտնեն Hadjaret en Nasâra անունին որ կը նշանակէ քրիստոնէական քարերը և կը գրանուին Տիբերիոյ հիւսիսային արևելեան կողմը, ի յիշատակ մեր Փրկչին կողմէ երկրորդ անգամ հացը շատցնելուն (Bar. gd. էջ 380):

Ս. Կուսի աղբիւրը. — Ս. Յովսէփի տունէն չորս վայրկեան հեռու արևելքի ուղղութեամբ, քառուղիի մը մէջտեղ կը գտնուի հասարակաց աղբիւր մը: Ս. Կոյս Մարիամու աղբիւրն է ան: Այս աղբիւրին քով կը գտնուի հին դամբարան մը՝ այժմ կտարուած, եւ ձախին ալ գէշ վիճակով աւազան մը: Բոլոր ուխտաւորները կը յիշեն աղբիւրը՝ միակը երկրին մէջ, անկէ է որ Ս. Կոյսը և իր Որդին ջուր կ'առնէին: 1103 ին Seawulf Ս. Կուսի աղբիւրը գտաւ «սիւնազարդ և մար-